ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ապրիլի 2023 թվականի N 606-Ա

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 3-րդ և 57-րդ կետերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին՝

1) թույլատրել փոփոխություն կատարել «Մոդուլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ 2022 թվականի նոյեմբերի 22-ին կնքված թիվ ՔԿ-ԲՄԽԾՁԲ-22/5-Ն պայմանագրում (այսուհետ՝ պայմանագիր)՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում Արգիճի և Աստղաձոր ջրամբարների կառուցման համար նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման համար ժամկետի սկիզբը սահմանելով 2023 թվականի ապրիլի 8-ը և Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում Ելփինի և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քասախի ջրամբարների կառուցման համար

նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների մատուցման համար ժամկետի սկիզբը սահմանելով 2023 թվականի փետրվարի 25-ը՝ չկիրառելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության պահանջները և պայմանագրի 5.3-րդ կետով նախատեսված տույժը.

2) անհրաժեշտության դեպքում ապահովել «Մոդուլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից պայմանագրի շրջանակում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների գործողության ժամկետների երկարաձգումը:

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի գործողությունները տարածվում են կողմերի միջև մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ